Եկեղեցի ննջեցյալին հանգիստ չէին տալիս։ Հանգիստ էին տալիս միայն եկեղեցուց մինչև գերեզմանատուն գնալիս, այն էլ ճաժը գետնից բարձրացնելիս այդ տեղերին ճաժավ ամուր խփում էին, կարծես նրա հիշողության մեջ այդ ճանապարհը ամուր գամելու, դրոշմելու և հնարավոր վերադարձը միայն մինչև եկեղեցին ուղղելու համար։ Դիակը լվանալուց հետո, պատանքելուց առաջ ննջեցյալի վրնդէրի պոյքնին[82] կապում էին իրար, որպեսզի նա քայլել չկարողանա[83]։ Նրա ոտքը ծանր պիտի լինի տան վրա։ Այդ նպատակով տանը նրա վերցրած տեղը fur էին դնում։ Որպես նյութեղեն էակ հոգին կարիք ունի կերակուրի։ Դրա համար ննջեցյալի բերանի մոտ կամ կրծքին հաց էին դնում[84]։ Թաղումից հետո հուղարկավորները հոգէհաց էին ուտում, որով ենթադրվում էր, որ հոգին էլ հացով կշտանում է։ Այնուհետև նաև գերեզմանի վրա այցելելիս նույն նպատակով ուտում էին բերած կերակուրները և մնացորդն էլ տուն չէին տանում, այլ. կամ թողնում էին գերեզմանի մոտ, կամ անմիջապես բաժանում էին աղքատներին, չլինի՞ թե կերակուրի հետ ննջեցյալն էլ գա տուն։ Երբ հանգուցյալը շատ հաճախ էր երևում երազում, եզրակացնում էին, որ նա գուցե կարոտած է կերակուրին և երեկոյան դեմ դռան արանքով մի կտոր հաց էին դուրս նետում, ասելով՝

«Էս էլ քու փայը, էլ չգա՛ս»։

Հոգուն դուր էր գալիս անուշահոտությունը։ Դրա համար ննջեցյալի քթածակերի մեջ դնում էին խունկ, կամ խունկ էին վառում նրա գերեզմանի վրա, մանավանդ օխտին, fառսրնին, հոգեհանգիստ կատարելիս, առանձնապես Մեծ պասի Զարշարաճաց շաբաթվա Օթի ուրբաթ՝ Հուդի ուրբաթ օրը, երբ ենթադրվում էր, որ Քրիստոսի հոգին շրջում է և նրան հետևելով շրջում, թափառում են նաև ննջեցյալների հոգիները։ Խնկի ծուխը քաշում, պահում էր հոգիներին գերեզմանի մոտ։ Վառում էին խունկը նաև տանը, կիրակնամուտին, երբ ննջեցյալները սովորաբար այցելում էին իրենց ազգականների տները։ Խնկի ծուխը երբեմն շրջեցնում էին տան բոլոր անկյունները, նույնիսկ գոմը, որպեսզի հոգին ամեն տեղ անուշահոտություն վայելի և գոհ հեռանա։ Որպեսզի նա այդ այցելության և շրջագայության ժամանակ չմոլորվի՝ որևէ մեկին գուցե և կօխի, լույսը չէին հանգցնում։ Վառում էին ձեթի կամ ճարպի ճրագ, երբեք ոչ նավթի—հնության վերապրուկ։

Հոգին իր հատուկ զետեղարանն ունի մարդու մեջ—ջիգյառի՝ լյարդի, սրտի, գլխի մեջ։ Երբ ծննդկանը երկունքի ժամանակ շատ է տանջվում, ասել է թե՝ fաշկէրը ուզում են նրա ջիգյառը հանել ու կյանքից զրկել։ Քաշկէրին խաբելու համար երդիկով դուրս էին նետում այծի ջիգյառը։ Եթե ննջեցյալը հաճախ էր երևում երազում կամ տան մեջ, եթե նրան թաղելուց հետո տանեցիներից մեկը հիվանդանում էր, ուրեմն նա ազգականի կարոտ էր քաշում, շարունակ այցելում էր նրանց կամ որևէ մեկին ուզում էր հետը տանել։ Այն ժամանակ նրա գերեզմանը մի փոքր փորելով, փէտի պիճր՝ փայտե ցից կամ դաշույն էին ցցում այնտեղ, որտեղ ենթադրվում է նրա սիրտը, որ սիրտը վերջնականապես դադարի կարոտը քաշելուց, և ննջեցյալն ավելի հաստատ

---

82 Ոտների բութ մատերը։

83 Ոչ թե որպեսզի ոտները իրարից չհեռանան, ինչպես այժմ են բացատրում Գորիսում։

84 Սա ուներ նաև մագիկ նշանակություն—fաշկէրին հեռացնելու համար հաց էին դնում ննջեցյալի բերանը։